

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/1

9 հունիսի 2015 թ.

Քննարկվեց «Գոլդն Գրեյպ Արմաս» ՍՊԸ 07.05.2015 թ-ի դիմում-գանգատը:

#### **«Գոլդն Գրեյպ Արմաս» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Սույն թվականի փետրվարի 20-ին «Գոլդն Գրեյպ Արմաս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Ընկերություն) ՀՀ ֆինանսների նախարարություն հայտ (դիմում) է ներկայացրել ենթակցիզային ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմանիշերի ձեռքբերման նպատակով: Դիմումի հիման վրա Ընկերությունում իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքներով կազմվել է տեղեկանք և 20.04.2015թ. 1141/39-9 գրությամբ Ընկերությանը պատասխանվել է, որ ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման դիմումը մերժվել է ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1269-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Վերը նշվածի հետ կապված ընկերությունը հայտնում է իր առարկությունը, քանի որ ակցիզային դրոշմանիշերի տրամադրման մերժման հիմքերը շարադրված են միայն «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1<sup>2</sup> կետում, մասնավորապես՝ դրանք են նշված 2 դեպքերը՝

1. դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ակցիզային հարկի գծով գերավճարը քիչ է պահանջվող դրոշմանիշերի համար վճարման ենթակա գումարից,
2. արտադրական հզորությունները չեն համապատասխանում պահանջվող դրոշմանիշերի քանակին:

Տեսչության կողմից կազմված տեղեկանքում չկա նշում այն մասին, որ արտադրական հզորությունները չեն համապատասխանում պահանջվող դրոշմանիշերի քանակին, միաժամանակ Ընկերության հարկային պարտավորությունների անձնական հաշվառման քարտում առկա ակցիզային հարկի գերավճարը պակաս չէ պահանջվող դրոշմանիշերի քանակից:

Ինչ վերաբերում է տեսչության գրության մեջ նշած մերժման հիմքին, այն է՝ «ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարը համարվում է ակցիզային հարկի կանխավճար, որը մարվում է (հաշվանցվում է) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների իրացմանը համամասնորեն», ապա հարկ է նշել, որ ըստ էության, խոսքը գնում է իրացմանը համամասնորեն ակցիզային հարկի գումարի հաշվանցման կարգի մասին, որը սակայն ներկայումս գործող օրենսդրությամբ նախատեսված չէ ոչ ակցիզային հարկի մասին օրենքի դրույթներով, ոչ ակցիզային հարկի հաշվարկի լրացման կարգով, ոչ էլ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի վարման կարգով: Հետևաբար, ՀՀ ՖՆ ԽՀՎ ՀՏ-ն սխալ է կիրառել ակցիզային դրոշմանիշերի տրամադրման հետ կապված իրավական ակտերի դրույթները, որի հիման վրա Ընկերությունը գտնում է, որ ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար ներկայացված դիմումը ենթակա է բավարարման և խնդրում է տրամադրել պահանջվող քանակի դրոշմանիշերը:

**«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».**

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 20.02.2015 թ-ին «Գոլդն Գրեյս Արմաս» ՍՊԸ կողմից «ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ է ներկայացվել ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման դիմում, որով ընկերությունը խնդրել է տրամադրել 1000 հատ ակցիզային դրոշմանիշեր ՀՀ-ում արտադրվող 1.5լ տարողությամբ գինիների դրոշմավորման համար: Ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի կողմից 23.02.2015 թ-ին հրապարակվել է թիվ 6206777 հանձնարարագիրը, որի համաձայն ընկերությունում իրականացվել է ակցիզային դրոշմանիշերի շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, արտադրական կարողությունների ուսումնասիրություն: Արդյունքում, 26.02.2015 թ-ին կազմվել է թիվ 6206777 տեղեկանքը:

«ԿԱ ՊԵԿ նախագահի 04.03.2009 թ-ի թիվ 268-Ա հրամանով հաստատված կարգի համաձայն ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 28.02.2015 թ-ի գրությամբ ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարին են ուղարկվել ընկերության ակցիզային դրոշմանիշեր տրամադրելու հայտը, ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարը հաստատող փաստաթղթի, կատարված ակցիզային դրոշմանիշերի կիրառման և ենթակցիզային ապրանքների մնացորդների, ինչպես նաև արտադրական կարողությունների ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանքի, նախկինում ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերի օգտագործման մասին հաշվետվության պատճենները:

«ՖՆ աշխատակազմի ղեկավարի 18.04.2015 թ-ի պատասխան գրությամբ ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ պետին հայտնվել է, որ «Գոլդն Գրեյս Արմաս» ՍՊԸ ակցիզային դրոշմանիշեր տրամադրելու հայտը մերժվում է: Հիմք ընդունելով ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավարի 18.04.2015 թ-ի գրությունը, ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի ընկերությանը հասցեագրված 20.04.2015 թ-ի գրությամբ, ընկերությանը ակցիզային դրոշմանիշեր տրամադրելու հայտը մերժվել է:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1՝ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ապրանքների դրոշմավորման համար ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար հարկային տեսչություն ներկայացվում են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևին համապատասխան դիմում՝ 2 օրինակից.

2) ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումարը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) հաշվետվություն՝ նախկինում ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերի օգտագործման մասին, հարկային մարմնի սահմանած ձևով.

4) արտադրողների (ներառյալ՝ շալցում իրականացնողների) կողմից որպես հումք ձեռք բերված սպիրտի ձեռքբերման հաշվարկային փաստաթղթերի պատճենները.

5) լիցենզիայի և տարեկան պետական տուրքի վճարման անդորրագրի ու համապատասխանության սերտիֆիկատի (պարտադիր լինելու դեպքում)

պատճենները: Լիցենզիայի և տարեկան պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենները կարող են չներկայացվել, եթե դրանք տվյալ տարվա համար մեկ անգամ արդեն ներկայացվել են: Համապատասխանության սերտիֆիկատը գործողության յուրաքանչյուր ժամանակահատվածի համար ներկայացվում է մեկ անգամ: Այս դեպքում սույն կետում նշված փաստաթղթերին կից ներկայացվող գրությունում նշվում են այն գրության ամսաթիվը և համարը, որին կից ներկայացվել են այդ պատճենները»:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1<sup>2</sup> մասի համաձայն. «Ակցիզային դրոշմանիշերը տրամադրվում են սույն հոդվածի 1<sup>1</sup>-րդ մասում նշված փաստաթղթերի և արտադրողների մոտ հարկային տեսչությունների կողմից արտադրական կարողությունների ուսումնասիրության վերաբերյալ կազմված տեղեկանքի հիման վրա: Հարկային տեսչությունն ակցիզային դրոշմանիշերը տրամադրում է փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում: Ակցիզային դրոշմանիշեր չեն տրամադրվում, եթե դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ակցիզային հարկի գծով գերավճարը քիչ է պահանջվող դրոշմանիշերի համար վճարման ենթակա գումարից, կամ արտադրական հզորությունները չեն համապատասխանում պահանջվող դրոշմանիշերի քանակին: Այս դեպքում հայտը կարող է բավարարվել մասնակի՝ գերավճարի գումարին կամ արտադրական հզորություններին համապատասխան»:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ընկերությունն ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար հարկային տեսչություն է ներկայացրել «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1<sup>1</sup> մասով նախատեսված բոլոր փաստաթղթերը: Բացի այդ, ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ կողմից ընկերությունում կատարվել է արտադրական կարողությունների ուսումնասիրություն, որի արդյունքում 26.02.2015 թ-ին կազմվել է թիվ 6206777 տեղեկանքը:

Քննարկման ընթացքում հաստատվեց նաև այն հանգամանքը, որ ընկերության կողմից դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ակցիզային հարկի գծով գերավճարը քիչ չի եղել պահանջվող դրոշմանիշերի համար վճարման ենթակա գումարից, իսկ արտադրական հզորությունները համապատասխանել են պահանջվող դրոշմանիշերի քանակին:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ընկերության 20.02.2015 թ-ի դիմումով բերված պահանջը թվով 1000 հատ ակցիզային դրոշմանիշեր տրամադրելու վերաբերյալ ենթակա էր բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

«Գոլդն Գրեյս Արմաս» ՍՊԸ 07.05.2015 թ-ի դիմում-զանգատը բավարարել:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**